

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

7 մայիսի 2009 թ.
ք. Երևան

N 4

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ 2008-2009 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԵՎ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (30 սեպտեմբերի 1997 թվականի, ՀՕ-155) 76-րդ հոդվածի համաձայն՝ 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած առևտրային կազմակերպությունների համար «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2008 թվականի վճարման ենթակա շահութահարկը, ինչպես նաև 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունների համար «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2009 թվականի վճարման ենթակա շահութահարկը չի կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2%-ից և ավելի՝ համախառն եկամտի 10%-ից, որոնք համարվում են այդ տարիների համար շահութահարկի վերջնական գումար: Նույն օրենքի 46-րդ հոդվածի «գ» ենթակետի համաձայն շահութահարկի հաշվարկ չեն լրացնում (և չեն ներկայացնում) միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնող հարկատուները:

«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (27 դեկտեմբերի 1997 թվականի, ՀՕ-183) 31.2-րդ հոդվածի համաձայն՝ 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած անհատ ձեռնարկատերերի համար «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2008 թվականի վճարման ենթակա եկամտահարկը, ինչպես նաև 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերերի համար «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2009 թվականի վճարման ենթակա եկամտահարկը չի կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2%-ից և ավելի՝ համախառն եկամտի 10%-ից, որոնք համարվում են այդ տարիների համար եկամտահարկի վերջնական գումար: Նույն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» ենթակետի համաձայն տարեկան եկամուտների մասին հաշվարկ կարող են չներկայացնել այն հարկատուները, որոնք հարկային տարվա ընթացքում զբաղվել են բացառապես եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարների ձևով հարկվող գործունեության տեսակներով և չեն ստացել այլ՝ «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաշվարկման ենթակա եկամուտներ:

Այն դեպքում, երբ նշված կատեգորիայի հարկ վճարողները 2008 կամ 2009 թվականների ընթացքում հանդիսացել են շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճար վճարող և շահութահարկ (եկամտահարկ) վճարող, շահութահարկի (եկամտահարկի) նվազագույն և առավելագույն գումարների հաշվարկը կատարելու առումով նշված իրավական ակտերի դրույթները տարբեր կերպ են մեկնաբանվում:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավական ակտի մեկնաբանման և դրա վերաբերյալ պաշտոնական պարզաբանումներ տալու համար սահմանված դրույթներով, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

1. 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած և 2008 թվականի ընթացքում շահութահարկին

փոխարինող հաստատագրված վճար վճարող և շահութահարկ վճարող հանդիսացող առևտրային կազմակերպությունների 2008 թվականի տարեկան շահութահարկը չի կարող պակաս լինել համախառն եկամտի (բացառությամբ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտների) 2%-ից և ավելի՝ համախառն եկամտի (բացառությամբ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտների) 10%-ից:

2. 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած և 2008 թվականի ընթացքում եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող և եկամտահարկ վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերի 2008 թվականի տարեկան եկամտահարկը չի կարող պակաս լինել համախառն եկամտի (բացառությամբ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտների) 2%-ից և ավելի՝ համախառն եկամտի (բացառությամբ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտների) 10%-ից:

3. 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված և 2009 թվականի ընթացքում շահութահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող և շահութահարկ վճարող հանդիսացող կազմակերպությունների 2009 թվականի տարեկան շահութահարկը չի կարող պակաս լինել համախառն եկամտի (բացառությամբ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտների) 2%-ից և ավելի՝ համախառն եկամտի (բացառությամբ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտների) 10%-ից:

4. 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված և 2009 թվականի ընթացքում եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող և եկամտահարկ վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերի 2009 թվականի տարեկան եկամտահարկը չի կարող պակաս լինել համախառն եկամտի (բացառությամբ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտների) 2%-ից և ավելի՝ համախառն եկամտի (բացառությամբ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտների) 10%-ից:

**ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների
կոմիտեի նախագահ՝**

Գ. Խաչատրյան